ՅԱԽԵԼՈՒԱԾ ՆՈՐԱԳՐՈՑ

ԳԻՆ 30 ՓԱՐԱՅ

ԴԱՇՆԱԳՐՈՒԹԻՒՆ Ի ՄԷՋ ԵՐԿՒՑ ԱԶԳԱՑ ՌՈՒՍԱՑ ԵՒ ՀԱՅՈՑ

Ցօդուած Ա. Նախքան զամենայն հաստատել զեր և զմիաբանութիւնն ի մէջ երկուց ազգացս՝ ըստ այնմ "դուք ամենքդիւն եղբարք եք„, որք ի մէջ իւրեանց չունիցին ամենեւին խըտրութիւն օրինաց ոչ Ռուսաց առ հասատս և յեկեղեցիս մեր, և ոչ մեր առ նոսա զի ի Քրիստոս ոչ այլ ինչ է եթէ ոչ հաւատ սիրով յաջորդեալ (Գաղատացւոց 7 գլուխ 6 համար), այլ համբիլ զմիմեանս միոյ և նոյնոյ հաւատոյ և եկեղեցւոյ ծնունդ հիմնեալ ի վերայ վրկչական բանի թէ "այսու ծանիցեն զձեզ թէ իմ աշակերտ եք, թէ զմիմեանս սիրեցէք„: վասնորոյ և համարձակեալ և մուտ առնել յեկեղեցիս իւրեարս, որպէս զի մի՛ մնասցէ նիւթ խռովութեան. վասն զի միաբանս զաւանութիւն ըղձատուիլ Սուրբ Երրորդութիւն և մարդեղութիւն բանին Աստուծոյ՝ Աստուած և մարդ կատարեալ, և վասն մեր չարչարեալ, զոր ի հաւատամքի պաշտի և ի նոցանէ և ի մէնջ, որ հիմն քրիստոնէական աղդացս են ի վերայ կարծեցեալ դատողութեան մարդկան:

Բ. Զհետեալս յիւրաքանչիւր աղգացս չընկալուլ ի հաղորդութիւն իբր զպղծորիչս և զխռովարարս սիրոյ և խաղաղութեան:

Գ. Ի հաւատս գայ ամենայն մաճկաց և հեթանոսաց, որ աղգի կրօն կամիցին ըմբռնել՝ նա նովաւ մկրտել, դարձ դայթակղութեան աղգիցման լիցին ըստ հաճոյից նոցա որպէս մի և նոյն քրիստոնէական օրինաց պաշտօնեայք:

Դ. Կապակցութիւն երկուց թագաւորութեանց մեծ դաշամբ յաւիտենական:

Ե. Լինիցին ի Հայաստան չափաւոր ղօրք Ռուսաց երանելւոյ միով յաղգին պահպանութիւն և երկիւղի այլ թագաւորաց՝ Պարսից և Օսմանցւոց, և ի ժառանգաց թագաւորութեան մինն ղօրնիցի ի դրունս կայսեր:

Զ. Չպարտութիւն մեր այնպէս եղիցի որպէս լինիւր երբեմն ցուն նաց և Պարսից տալով ի յարքունիս հարկայն և ի հանգաց ոսկւոյ և արծաթոյ, և ի ժամանակի պատերազմի յօդնութիւն միմեանց հասանիցեն որքան և հարկն պահանջիցէ:

Է. Մինչ ամենողորմած և օգտատիրաբ կայսերուհին կամի օգնութիւն առնել տարաբախտ աշխարհի մերոյ և կործանեալ թագն նորոգել, ընտրութիւն թագաւորին մերոյ կախեալ լինիցի ի կամայ նորա միայն, եթէ յաղգէ մերմէ և եթէ գրան իւրոյ հաւատարմոյ:

Ը. Որ ոք թագաւոր կացուսցի լինիցի հայոց օրինօք և ի վաղարշապատ թագաւորական քաղաքն ի սուրբ էջմիածին օծանիցի որպէս նախնի թագաւորքն մեր:

Թ. Զթագաւորական քաղաքն պատրաստեալ ի վաղարշապատ կամ յՕնի թագաւորական քաղաքն կամ յայլ պատշաճաւոր տեղի յՅայրարատ գաւառի:

Ժ. Ոհմանեալ կաւալերն (1) (օրան նշան) լինել տապան Նոյի, և լենան երեք գոն կարմիր, կանաչ և կապոյտ ըստ գունոյն ազգացն որ զինի ջրհեղեղին ազատեալ Նոյի ի նշան հաշտութեան:

ԺԱ. Եթէ հաստատեսցի և այլ կաւալեր լինիցի յանուն Ս. Լուսաւորչին օրան պատկեր նորա և որպէս հաճոյ լինիցի:

ԺԲ. Հաստատեսցի և առաջին նշան մեր Դաստատակի հրիտասի, զոր և առաքեաց առ Աբգար թագաւորն մեր, տացի այն յաղթանակողացն միայն կարմիր լենաւիւ:

ԺԳ. Յարմարեսցի կնիք թագաւորական ըստ սովորութեան առաջնոց թագաւորացն մերոց Աբրշակունեաց արծիւն միագլխի, որ նախքան գքրիստոնէութիւնն՝ դառն ի ժամանակի քրիստոնէութեան և երկու առիւծն ի փոքր Հայաստան և նոքօք զարդարեսցին հանդերձ թագաւորաց մերոց գրօշակքն և գրամքն:

ԺԴ. Յաղէք առաջնոյ նախարարացն մերոց և իշխանաց յայսնեսցի ոք որքան հայրենիք ունեցեալ իցէ, որ վկայութեամբ հաստատեսցէ վերադարձուցեալ եղիցի առ նա և պատիւ նախադահութեան աղգին պահպանեսցի:

ԺԵ. Ի նորոգել իշխանութեան մերոյ մի՛ լինիցին ծառայք իշխանաց (ստրուկք) որք կարիցեն զմի մի վաճառել՝ ի նոցանէ, այլ լինիցին այնպէս որպէս յառաջ եղեալ են՝ ի ժամանակս թագաւորաց մերոց և Օսմանցւոց և Պարսից, որք թագաւորին են միայն ծառայք, և երբ թագաւորն կամիցի ուրուք իշխանի ընորհ ինչ առնել զդիւղ ինչ բնակչաւն չընորհեսցէ նմա, բայց ընորհըննկալ իշխանն կարողէ զդիւղն ընդ բնակչաց՝ ի միասին ծախել, և ոչ թէ բնակիչն, այլ դիւղն ընդ մըզոյն այսինքն ընդ հողոյն և չըրոյն, զոր գործեն մարդիկք, ցոյնք յորժամ տիրեցին մեզ գինի անկման թագաւորութեան Աբշակունեաց՝ կամեցան զմեզ սեպհականս ծառայ իշխանաց իւրեանց առնել. ասաի ազգ մեր ոչ հաճեցաւ առ նոսա, այլ մնին ընդ իշխանութեամբ բազդատու խալֆային զի ազատ մնասցին:

ԺԶ. Յաղագս վաճառականութեան սահմանեսցի օրէնք՝ ի մէջ երկուց թագաւորացս և յատկացուսցի մաքս իւրաքանչիւր վաճառելի իրաց և տացի մեզ նաւահանդիստն՝ ի կոստիական ծովն:

ԺԷ. Փախստեալ գինւորաց և հպատակաց սահմանել օրէնք, և վասն որպիսութեաբ ընդունելոյ և Ռուսաց իշխանս, զաղնիւս և ըղպատուաւոր անձինս ազգի մերում:

ԺԸ. Ընտրութիւն հայրապե-

(1) Կաւալերկամ օրան է անուն առ հասարակ թագաւորական նշանի՝ ի լեզու Ռուսաց, որով պնակն թագաւորք զղօրականս՝ ի յաղթանակի:

տին մերոյ լինի առաջարկութեամբ թագաւորին մերոյ, որպէս յայնմ ընթի՝ ի բոլոր աղգէն (1): Որովհետեւ պայծառապսպղ Դրիգոր Լեքսանդրիչ Պոտեմկինն է յաւուկ խնամակալ ազգի մերում, որ ըստ հաճութեան կայսերուհւոյն է կառավարիչ գործոց այսմիկ. և աղգի մերում յաւուկ խնամակալ և բերեալ, զոր լինչ նա անօրինեսցի զի ընորհ ողորմութեան մարդասէր կայսերուհւոյն, Նորին Իշխորդութեամբ յառաջանայ, որպէս յաթոռոյ Աստուածածնութեն՝ ի հրեշտակաց առ մարդիկ:

Զայս գրեցաւ կողմանէ Հայոց եւ՝ ի ձեռն Յովսէփ եպիսկոպոսի մաուցաւ կայսերուհոյն՝ յիշատակի՝ ի մերում անձամանօթանակի. թէ Գրիգոր Ալեքսանդրիչ Պոտեմկինն ջանայր ըստ ամենայնի՝ իւրովհ առնել զայս գործ, եւ յորդորէ միշտ զկայսերուհին զինքն կացուսանել թագաւոր՝ ի վերայ Հայոց. յաղագս որոյ հրամանաւ կայսերուհւոյն կոմանէ Ռուսաց գրեցաւ առ այս Դաշնագիր համաձայն գրութեանց գալոյց Հայոց օրինակ զայս:

Ցօդուածք Ա. Նախարարութիւն Հայաստանեայցդիցի հրովարտակաւ՝ ի տանէ Հայոց ըստ օրինացն Հայաստանեայց

Բ. Նախարան Հայոց լիցի՝ ի բուն ազգէն և ի ժառանգութենէ Հայոց և գուանութեան Հայաստանեայց աւրբ եկեղեցւոյ:

Գ. Ի զերայ կայսերութեան Ռուսաց 2000 Ձիաւորք, 2000 հետեւակք և 2000 մրաձիդք (թընդանօթաձիդ) ըստ կարգի պետաք թօփխանայիւք, ճեպխանիւք և կերակրովք, և այլ ամենայն հարկաւոր գործոք պիտոյիւք, քանի ամ ժամանակաք կայսերական ծախիւք կալով ձրաւցեն յերբեմն երկրին Հայաստանեայցվանն պահպանութեան երկրին և աղգին Հայոց:

Դ. Ամենայն ամրոցք և պատրաստութիւնք վինուց լինիցին ի ներքոյ հրամանի սպարապետին Ռուսաց, մինչև հաստել նոցա ի Հայաստան աշխարհ:

Ե. Ի տանէն Հայոց հատուցումն վասն ծախուց նոցին իւրաքանչիւր ամի լանողաց 2000 զօրաց 20000 թումանն տարեկան:

Զ. Ի լրանալ քսան ամի վերոյիշեալ հատուցումն ի տանէն Հայոց մեծի կայսերութեան, եթէ զօրքերն ոչ լինիցի արարեալ, որ ինչ լինի մնացեալն, այն պարտք լիցի անժխտելի ի վերայ տան Հայոց: Զի հատուցէ գանձարանի կայսեր տան և վեց տարի ժամանակաւ իւրաքանչիւր տարւոյն այն պարտք ի տան բաժնէն մեկն առանց չահի:

Է. Ի տանէն Հայոց իւրաքանչիւր տարւոյ մի անգամ ընծայից ցուցեալ լինի կայսեր Ռուսաց և ինչան հնազանդութեան քան մըղալ զուտ ոսկի, երեք ձի, և վեց խոյ:

Ը. Ցունն Հայոց ծանիցէ զկայսերութիւն Ռուսաց զիւր ազգատիկ ի գերութենէ կալով մըննասցէ բարեկամ ընդ բարեկամս, և թշնամի ընդ թշնամիս կայսեր և մեծ կայսրն սիրեսցէ զբարեկամս և առեւցէ զթշնամիս Հայոց:

Թ. Եթէ հրամանք ի կայսերութեան եղանէ ընդունիլ ի տանէն Հայոց զղինուորս, տունն Հայոց պարտական լիցի տալ մինչև 6000 զօրս և ապ և նոյն կերպիւ ստանալ զծախս նոցա ի կայսերութիւն ի Հայոց զիարդ ի վերն ի հինգերորդ պայմանին գրեալ է:

ԺԱ. Ամենայն ոք թէ կարգաւոր և թէ զինուոր որ ընդ հաւանութեամբ կայսեր է պատուաւոր լիցի ի մէջ աշխարհն և աղգին Հայոց, այնպէս զկարգաւորս և զզինուորս, որ յաղգէն Հայոց լիցի պատուելի ի մէջ աղգին Ռուսաց որպէս զաղգս իւրեանց:

ԺԲ. Չկերպ աստուածպաշտութեան Ռուսաց պատուեսցեն Հայք և Հայք պաշտեսցեն զամենայն ըստ սովորութեան իւրեանց յեկեղեցւոջ. և զնոյն պատուեսցեն Ռուսք:

ԺԳ. Ընդարձակապէս մտցեն և ելցեն ամենայն արհեստաւորք և վաճառականք յաշխարհն Ռուսաց, որ և իցէ ամենայն ձեռագործք աշխարհին Հայոց հատուցանելով զհարկն, զմաքսն և ըստ սովորութեան և կերպի կառավարութեան ազգին Հայոց, նմանապէս և Հայք մտցեն և ելցեն աներկիւղ և անկասկած յաշխարհն Ռուսաց, և ինչ և իցէ ձեռագործք հատուցանելով զհարկն զմաքսն. և ըստ սովորութեան և կերպի կառավարութեան ազգին Ռուսաց:

ԺԴ. Քրէական մեղապարտք, փախստականք եթէ ի Ռուսաց յաշխարհն Հայոց և Հայոց յաշխարհն Ռուսաց ընկալնուն պահպանութիւն միայն կենաց. բայց զրկեալքն ի պատուի և յոր ինչ պաշտօնէ իցէ, կամ փախստական եթէ լինիցի պարտաւոր ոսկւոյ և արծաթոյ, և եթէ Հայոց, պարտ է նմա դառնալ ըստ օրինայ աշխարհին, յորում գտանիցի անձն նորա. և փախստականն իցէ եկեղեցական պարտ իցէ դարձուցանել զնա առ առաջնորդն իւր:

ԺԵ. Ցունն Հայոց կառավարեսցէ զազգ իւր և զաշխարհն ըստ օրինի Հայոց և զոր ինչ աւելին յայնմանէ գիպուած և կառավարեսցին ի հատատութեան նոյնոյ օրինաց:

ԺԶ. Կայսերութիւն Ռուսաց ծանիցէ զատուն Հայոց իբրեւ ըզթագաւոր Հայաստանեայց, և ոչ ըզոչ զդեսպանն մեծ, բերան Հայոց, որ նստիցի ի Պետերբուրգ:

ԺԷ. Որովհետեւ երկրակցութիւնք և աղգաբանութիւնք Հայոց, Աղուանից և վրաց, ի հնոյ ժամանակէ իբրեւ զմի են, որ և այժմոյս սիրելի են միմեանց, վասն որոյ ի հարկաւոր ժամանակի տալով Հայոց 6000 զօրս Ռուսաց, ունիցին եւս աղատութիւն օգնական լինելոյ Աղուանից և վրաց որքան կարող լինիցին:

ԺԸ. Վասն հատուցումն լինելոյ զտարեկան ծախուց 6000 զօրաց կայսեր գրաւ լիցի չորան ի տան մանէ բոլոր եկամտից Հայաստան աշխարհին, այսպէս տանէն զզօրս մանն Հայրապետին Հայոց վասն ծախուց կրօնաւորաց, անապակաց, աղքատաց և նորոգութեան վանօրէից և այլոց պիտոյից. իսկ մանն գանձարանէն ընդհանուր տանն Հայոց:

ԺԹ. Հատուցմունք որ ի վերոյ պարտին լինել ի չորս եղանակս տարւոյն այսինքն նախ՝ ի մարտի 20րդ. յունիսի 20րդ. սեպտեմբերի 20րդ. և չորրորդ դեկտեմբերի 2՛):

Ի. Եթէ հանդիպեսցի ինչ սըխալանք, յանդիմանութիւնք ի մէջ երկուց աղգաց տէրութեանց Ռուսաց և Հայոց, առ որս խռովութիւնք քակեալ, պարտ լիցի երկուց կողմանց զդանգաստ և զպատասխանիս իւրեանց ընծայել առ ի սպաս ամենայն վառաց արժանի կայսերն Հռոմայ այսինքն Գերմանիոյ, և ի վերայ որոյ ի նմանէ լեալ վճիռն լիցի երկուց կողմանց արդարութեանն. արդ եթէ հանդէս հատեսցի կամաց Հայրապետին և իշխանաց և տանուտէրանց Հայոց յայսմանէ տալեսցի 200 հատ յամի սեռան 1779:

Թարգմանեաց Պաչանց բանս ի դաչանց մատանէ Ռուսաց 1786 ամի՝ ի Պետերբուրգ Եղիազար Շահիրեան նոր Զուղայեցի:

17 Յուլիս 1876. ժամ 6.

---

(1) Թուի թէ ի սմանէ առեալ է գկանոնն, զոր վասն ընտրութեան կաթողիկոսի գրեալ է՝ ի բարձրագոյն կարգադրութեան որ վասն լուսաւորութեան Հայոց Եկեղեցւոյ կայսրն Ռուսաց ի 11 մարտի 1836 ամի: